Տեղեկատու թիվ 05 (Մայիս2024թ.)
Newsletter N 05

Հայ դատի Կենտրոնական գրասենյակ

Մեկնարկեց ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների համահայկական խորհրդաժողովը

Արցախի հայաթափումով և Հայաստանի Հանրապետության շուրջ օրըստօրե լարվող անվտանգային միջավայրի ու գոյութենական սպառնալիքների պայմաններում ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի աշխատանքների հիմնական ուղղությունների քննարկման և համադրման, ինչպես նաև ըստ անհրաժեշտության մարտավարական որոշակի վերանայումներ անելու համար՝ ՀՅԴ Բյուրոն հրավիրել է Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների խորհրդաժողով:
Խորհրդաժողովի օրակարգում Հայաստանի Հանրապետության և առհասարակ հայ ժողովրդի առջև ծառացած արտաքին հիմնական մարտահրավերների քննարկումն է, դրանց հաղթահարման գործում Հայ դատի համակարգի ներուժի նպատակային օգտագործումը:
Խորհրդաժողովին մասնակցում են ավելի քան քսան երկրներից ժամանած՝ ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների պատասխանատուներ, ինչպես նաև ՀՅԴ կուսակցական մարմինների ներկայացուցիչներ:
«Երկու օր առաջ հետևում էի Ադրբեջանի այսպես կոչված Ազգային Ժողովի նիստին, հետո մեր Ազգային Ժողովի նիստին: Եվ գիտեք, երբ խոսույթները լսում

էի, ինձ թվում էր, թե շփոթել եմ: Երկուսն էլ Ադրբեջանի Ազգային Ժողովն է՝ նույն խոսույթով, նույն տրամաբանությամբ և մեկը մյուսին՝ իբրև ադվոկատ և դատապաշտպան: Շատ ցավալի է, որ այսօր Հայաստանում կատարվում է այն, ինչը երեկ առաջի օրը Ադրբեջանի Ազգային ժողովում պահանջ դրվեց Հայաստանի կառավարությանը չեզոքացնել եկեղեցու և Սփյուռքի ազդեցությունը ռևանշիստական և սեպարատիստական գործունեությամբ»,- նշեց Տեր Նաթան արքեպիսկոպոսը:
ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանի խոսքով՝ ՀՅԴ-ն որոշել է պահպանել Արցախի իր կառույցները: Նրա համոզմամբ՝ ՀՅԴ-ի համար Արցախի էջը փակված չէ:

Text Link

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների համահայկական խորհրդաժողովի մասնակիցներին

Մայիսի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների համահայկական խորհրդաժողովի մասնակիցներին՝ առաջնորդությամբ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ և Հայ դատի հանձնախմբերի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատուրյանի:
ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի քաղաքական հարցերի գրասենյակի ղեկավար Կիրո Մանոյանը, ներկայացնելով հյուրերին, Նորին Սրբությանը համապարփակ տեղեկություններ փոխանցեց խորհրդաժողովի կատարած աշխատանքների մասին:
Ողջունելով հյուրերին՝ Ամենայն Հայոց Հայրապետը կարևորեց խորհրդաժողովի աշխատանքները՝ ի խնդիր հայրենիքի և ազգի զավակների իրավունքների պաշտպանության: Նորին Սրբությունը մասնավոր անդրադարձ կատարեց հայրենիքի առջև ծառացած առկա խնդիրներին և դրանց հաղթահարման ուղղությամբ ջանքերի մեկտեղման անհրաժեշտությանը: Հատկապես կարևորվեց Հայաստան-Սփյուռք կապերի սերտացումը և համազգային ներուժի ծառայեցումը հանուն հայրենիքի զորացման և ապահով կյանքի կերտման:
Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ՀՅԴ Հայ դատի գրասենյակին Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ գործադրվող ջանքերի, արցախահայերի արդար իրավունքների բարձրաձայնման ու հետապնդման և հայրենանվեր ու ազգօգուտ այլ իրագործումների համար:

Text Link

ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների համահայկական

խորհրդաժողովի ամփոփում

Հ. Յ. Դաշնակցության Բյուրոյի հրավերով, մայիսի 25-28-ը Հայաստանում գումարվեց ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների համահայկական խորհրդաժողով՝ շուրջ քսան երկրներից ժամանած ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների պատասխանատուների մասնակցությամբ:
Խորհրդաժողովը լսեց ՀՅԴ Հայ դատի համաշխարհային ցանցի աշխատանքների ամփոփումները նախորդ՝ 2021թ. դեկտեմբերի խորհրդաժողովից առ այսօր, քննարկեց Արցախի հայաթափումից ու դրանով պայմանավորված զարգացումների վերաբերյալ տարբեր զեկույցներ, կատարեց գործունեության հիմնական ուղղությունների և քաղաքական առաջնահերթությունների մարտավարական բնույթի փոփոխություններ՝ առաջիկա գործունեության համար:
Խորհրդաժողովն արժևորեց պատերազմական և մարդկության դեմ հանցագործությունների համար մի շարք երկրներում ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի կողմից սկսված՝ պատժամիջոցների կիրառմանն ուղղված աշխատանքները և ընդունեց որոշում՝ այն շարունակելու նոր թափով ու աշխարհագրական առավել լայն ընդգրկմամբ:
Խորհրդաժողովը քննարկեց այն հիմնական ուղղություններն ու հնարավոր քայլերը, որոնք, հավանաբար, ձեռք կառնի Ադրբեջանն՝ իր միջազգային հեղինակության բարձրացման և պատերազմական հանցագործի պիտակից խուսափելու համար: Անդրադառնալով այս հարցին՝ խորհրդաժողովն ընդունեց համապատասխան որոշումներ: Առհասարակ, շարունակվելու են ադրբեջանական հանցագործությունների միջազգային հանրահռչակումն ու դրանց վերաբերյալ քաղաքական, հասարակական ու իրավապաշտպան շրջանակների իրազեկվածության բարձրացման աշխատանքները:

Text Link

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

U.S. Government Watchdog Group Adds Azerbaijan to List of World's Worst Religious Freedom Abusers

The Armenian National Committee of America (ANCA) joined In Defense of Christians (IDC) and Save Armenia in calling on the State Department to follow U.S. Commission on International Religious Freedom (USCIRF) recommendations to place Azerbaijan on its Countries of Particular Concern (CPC) list, along with North Korea and Pakistan.
In its annual report issued earlier today , USCIRF downgraded Azerbaijan from its Special Watch List (SWL) to the CPC designation and urged the State Department to do the same for "for engaging in systematic, ongoing, and egregious violations of religious freedom, as defined by the International Religious Freedom Act (IRFA)." The report also called on the U.S. Government to "allocate funding to the U.S. Agency for International Development and U.S. Embassy in Baku to restore, preserve, and protect places of worship and other religious or cultural sites in Nagorno-Karabakh and surrounding territories."
During a press conference organized by IDC and Save Armenia, ANCA Executive

Director Aram Hamparian pressed the State Department to heed USCIRF's recommendation.

Text Link

ԱՄՆ Կոնգրեսում առաջարկվել է 200 մլն դոլար տրամադրել արցախցիների օժանդակության համար և օգնել Հայաստանի պաշտպանունակությանը

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի 66 անդամներ նույն պալատի հատկացումների հանձնաժողովի ղեկավարներին կոչ են արել 200 միլիոն դոլար հատկացնել արցախցի փախստականներին, ընդլայնել ԱՄՆ ռազմական օգնությունը Հայաստանին, ամբողջապես դադարեցնել ռազմական և անվտանգային աջակցությունը Ադրբեջանին և ուսումնասիրել Ադրբեջանի ռազմական հանցագործների նկատմամբ պատժամիջոցների կիրառման հարցը: Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի կողմից աջակցվող երկկուսակցական նամակով, որն առաջնորդում էր Կոնգրեսի հայկական հանձնախմբի համանախագահ Ֆրենք Փալոնը, մասնավորապես պահանջվում է.
— 200 միլիոն դոլար Լեռնային Ղարաբաղից տեղահանված փախստականների համար
– ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին տրամադրվող բոլոր ռազմական և անվտանգային օգնության կասեցում, ադրբեջանական պաշտոնյաների դեմ հնարավոր պատժամիջոցների կիրառման հարցում պետքարտուղարության ուսումնասիրություն:
– 20 միլիոն դոլար արտաքին ռազմական ֆինանսավորում և 10 միլիոն դոլար՝ միջազգային ռազմական կրթության և ուսուցման համար
— 10 միլիոն դոլար՝ իրավապահ համակարգի բարեփոխումների համար
— 10 միլիոն դոլար՝ ժողովրդավարական բարեփոխումների համար

Text Link

Sixty-Six U.S. Representatives Urge Congressional Appropriators to Allocate $200 Million for Artsakh Genocide Victims; Help Armenia Defend Against Azerbaijani Aggression

Sixty-six U.S. Representatives called on U.S. House Appropriations Committee leaders today to allocate $200 million in U.S. assistance for Artsakh refugees, expand U.S. military aid to Armenia, suspend all military and security assistance to Azerbaijan and explore the application of sanctions on Azerbaijani war criminals, reported the Armenian National Committee of America (ANCA).

The ANCA-backed bi-partisan letter, led by Congressional Armenian Caucus Co-Chair Frank Pallone (D-NJ) and sent to Rep. Mario Diaz-Balart, Chairman of the House Appropriations Subcommittee on Foreign Operation, and Rep. Barbara Lee (D-CA), Ranking Democrat of that Committee, specifically requests:

— $200 million for refugees from Nagorno-Karabakh in AEECA
— Suspension of all U.S. military and security aid to Azerbaijan and directs the Secretary of State to develop an assessment of potential sanctions against Azerbaijani officials.
— $20 million in Foreign Military Financing (FMF) and $10m in International Military Education and Training (IMET) for Armenia
— $10 million for law enforcement reforms in INCLE
— $10 million in democratic reforms under OTI

"We join with the leadership of the Congressional Armenian Caucus and more than sixty of their U.S. House colleagues in demanding a long overdue ban on U.S. military aid to Azerbaijan, sanctions against the Aliyev regime, and meaningful levels of U.S. humanitarian aid for Artsakh refugees," said ANCA Executive Director Aram Hamparian.

Text Link

#ExpelCuellar: ANCA Calls for Expulsion of Rep. Cuellar from Congress



The Armenian National Committee of America (ANCA) today called on the U.S. House to immediately expel Henry Cuellar (D-TX) over his indictment for accepting nearly six hundred thousand dollars in Azerbaijani bribes. The indictment, only recently unsealed, presents detailed accusations that Rep. Cuellar, who serves as co-chair of the Congressional Azerbaijan Caucus, accepted substantial payments from Azerbaijani state-controlled entities in return for advancing pro-Azerbaijan legislation.
"We call on the U.S. House to immediately vote to expel Henry Cuellar, condemn Azerbaijan's brazen interference in our American democracy, and enact statutory measures to prevent ongoing attempts by Azerbaijan's corrupt Aliyev family to rig U.S. foreign policy in its favor," said Aram Hamparian, Executive Director of the ANCA.
"We have, for more than a decade now, fought Henry Cuellar at the ballot box and battled his genocide-enabling legislation on Capitol Hill – always shining a national spotlight on this foreign breach of the American public trust. By all accounts, this is just the tip of the iceberg."
According to the federal indictment, unsealed earlier today, Rep. Cuellar and his wife are accused of receiving over $598,000 from an Azerbaijani state-owned oil company and other foreign entities in exchange for advancing Azerbaijani interests within the U.S. Congress.

Text Link

ANCA Chairman Calls on Armenian Caucus Co-Chair to Lead Efforts to Expel Rep.



Cuellar from Congress

Armenian National Committee of America (ANCA) Chairman Raffi Hamparian has called on Congressional Armenian Caucus founding Co-chair Rep. Frank Pallone (D-NJ) to take immediate steps to expel Rep. Henry Cuellar (D-TX) from Congress following his criminal indictment for accepting nearly $600,000 in bribes from Azerbaijan.

In a May 8th letter to Rep. Pallone, the Hamparian described the instances of bribery detailed in the indictment as "despicable and inconsistent with the transparent and accountable democracy we have the right to enjoy in the United States." He expressed concerns that the charges are "just the 'tip of the iceberg' and part of a broader foreign campaign that has contributed to a deeply flawed American foreign policy with respect to Armenia and Azerbaijan."

In addition to expulsion proceedings, Hamparian is also urging the Armenian Caucus Co-Chair to call on the "House Ethics Committee to conduct an investigation into the influence activities of the Azerbaijani Government and state-affiliated entities in the U.S. Congress – particularly as it pertains to the activities of the Congressional Azerbaijan Caucus."

According to a federal indictment unsealed last Friday, Rep. Cuellar, who serves as co-chair of the Congressional Azerbaijan Caucus, and his wife, Imelda, accepted substantial payments from Azerbaijani state-controlled entities in return for advancing pro-Azerbaijan legislation. On multiple occasions, Cuellar communicated directly with Azerbaijani officials to discuss strategies for overriding Armenian interests in Congress – specifically targeting initiatives led by Congressional Armenian Caucus leaders.

Text Link

ANCA Barnstorms Across America, Rallying Support for Artsakh's Rights and Armenia's Security

Over the past months, ANCA national board and staff members have barnstormed across the United States, mobilizing Armenian American communities through a series of public forums, workshops, and events aimed at empowering local activists and coordinating advocacy efforts to bolster Armenia's sovereignty and hold Azerbaijan accountable for its genocide of Artsakh and ongoing aggression against Armenia.

Spearheaded by newly appointed Grassroots Director Gev Iskajyan, the ANCA National team participated in over a dozen events across 10 states, speaking with Armenian American youth leaders and veteran community activists about a broad range of ANCA legislative advocacy priorities.

Following his return from Artsakh, where he led the ANC-Artsakh office, Iskajyan spoke at several student forums in Los Angeles, including with the Armenian Students' Associations at the College of the Canyons, UC Riverside, UCLA, and USC – addressing the immediate challenges facing the 150,000 Armenians forcibly displaced from their homes in Artsakh. He stressed the role of the diaspora in securing expanded humanitarian assistance to those in need and forcefully advocating for the safe and dignified return of Artsakh's Armenians under international protection.

Text Link

EAFJD on the situation in Tavush: “Continuous concessions will fail to suppress Azerbaijan’s expansionist agenda towards Armenia”

EAFJD on the situation in Tavush: “Continuous concessions will fail to suppress Azerbaijan’s expansionist agenda towards Armenia”

2 May 2024: The European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) vehemently condemns Azerbaijan’s expansionist policies towards the Republic of Armenia, whereas currently the focus is on the Tavush region. Azerbaijan’s unwarranted territorial claims, including those on Armenia’s Tavush region and the so-called enclaves, as well as its insistence on extraterritorial transport links through Armenia’s Syunik region, are utterly unacceptable.

While refusing to withdraw its forces from more than 200 square kilometers of the sovereign territory of the Republic of Armenia it occupies since 2021, Azerbaijan is now putting pressure on the Republic of Armenia to take control of a strategic territory in the Tavush region of Armenia. Thus, under the guise of “delimitation and demarcation” Azerbaijan is enforcing a land grab which will further aggravate the vulnerability of Armenia.

If Azerbaijan takes control of the territory of strategic importance in the Tavush region of Armenia, this will massively endanger Armenia’s interstate connection with Georgia, a vital gas pipeline for Armenia and will encircle a number of Armenian villages, which will inevitably lead to their depopulation. Apart from this, it will jeopardize the security of the Armenian region of Lori.

Despite engaging in the process, the Armenian Prime Minister has declared that this creates no solid security guarantees against a possible aggression by Azerbaijan. Thus, the current actions of the Armenian government, carried out without any guarantee of reaching a durable and dignified peace, constitute a further capitulation and are in violation of the Armenian Constitution. Furthermore, it would allow Azerbaijan to carry out a new aggression from better positions.

Text Link

Շարունակական զիջումները չեն կարող զսպել ադրբեջանական ծավալապաշտությունը

Շարունակական զիջումները չեն կարող զսպել ադրբեջանական ծավալապաշտությունը. ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակ

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի Գրասենյակը խստորեն դատապարտում է Հայաստանի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի ծավալապաշտական քաղաքականությունը, մասնավորապես՝ ներկայումս Տավուշի մարզի նկատմամբ: Ադրբեջանի անհիմն տարածքային պահանջները, այդ թվում՝ Հայաստանի Տավուշի մարզի և, այսպես կոչված, «անկլավների» նկատմամբ, ինչպես նաև Հայաստանի Սյունիքի մարզով արտատարածքային տրանսպորտային կապի վերաբերյալ, բացարձակապես անընդունելի են:

Ադրբեջանը, հրաժարվելով դուրս բերել իր զինված ուժերը 2021թ. ի վեր Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի ավելի քան 200 քառ. կմ տարածքից, ճնշում է գործադրում Հայաստանի Հանրապետության վրա՝ իր վերահսկողության տակ առնելու ՀՀ Տավուշի մարզի ռազմավարական տարածքները: Այսպիսով՝ Ադրբեջանը «սահմանազատման և սահմանազծման» քողի տակ իրականացնում է հողազավթում, ինչն էլ ավելի կխորացնի Հայաստանի խոցելիությունը:
Եթե Ադրբեջանը վերահսկողության տակ վերցնի Հայաստանի Տավուշի մարզի ռազմավարական նշանակություն ունեցող տարածքները, դա մեծապես կվտանգի Վրաստանի հետ Հայաստանի միջպետական կապը, Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող գազատարը և կշրջափակի մի շարք հայկական գյուղեր, ինչն անխուսափելիորեն կհանգեցնի նրանց հայաթափմանը: Բացի այդ, նոր իրավիճակը նաև կվտանգի Լոռու մարզի անվտանգությունը:

Text Link

The EAFJD Calls for Action to Protect the Historic Armenian Quarter in Jerusalem

The European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) has addressed a letter to the Head of the Mission of Israel to the EU and NATO, the Members of the European Parliament Delegation for Relations with Israel, and the main Jewish organizations in the EU and Belgium, addressing the alarming circumstances threatening the historic Armenian quarter in Jerusalem. The letter urges the addressees to use their leverage to call on the Israeli authorities to take appropriate action and stop the highly destructive developments in Jerusalem.
Dating back to the 4th century, the Armenian presence in Jerusalem holds deep historical significance. However, this historic quarter is currently under threat due to aggressive actions by extremists, settlers, and businesspeople, seeking to appropriate the land. Recent incidents, including an attack led by individuals associated with Israeli-Australian businessman Danny Rubenstein, have targeted the Armenian community, resulting in injuries and arrests among Armenian residents. Despite protests and calls for protection, the Israeli authorities have not taken decisive action to safeguard the Armenian quarter from these hostile incursions.
In the light of these developments, the EAFJD urges the Israeli authorities to protect the status quo of Jerusalem and refrain from altering the demographic composition, institutional structure, and the physical, cultural and historical character of Jerusalem.Drawing parallels between the suffering endured by both Armenians and Jews throughout history and having had to fight racial hatred, the EAFJD emphasizes that the Israeli authorities have a duty to prevent such occurrences in Jerusalem.
Text Link

ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակը կոչ է անում քայլեր ձեռնարկել Երուսաղեմի պատմական հայկական թաղամասի

պաշտպանության համար

ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակը նամակ է հղել ԵՄ-ում և ՆԱՏՕ-ում Իսրայելի ներկայացուցչին, Իսրայելի հետ հարաբերությունների գծով Եվրախորհրդարանի պատվիրակության անդամներին, ԵՄ-ի և Բելգիայի հիմնական հրեական կազմակերպություններին՝ անդրադառնալով Երուսաղեմի պատմական հայկական թաղամասին սպառնացող տագնապալի վիճակին: Նամակի հասցեատերերին կոչ է արվում օգտագործել իրենց լծակները՝ ճնշում գործադրելու Իսրայելի իշխանությունների վրա, որպեսզի վերջիններս համապատասխան քայլեր ձեռնարկեն և դադարեցնեն Երուսաղեմում խիստ մտահոգիչ և կործանարար զարգացումները:
Երուսաղեմում հայկական ներկայությունը առկա է 4-րդ դարից և ունի պատմական մեծ նշանակություն: Սակայն,այն ներկայումս վտանգված է ծայրահեղականների, վերաբնակիչների և գործարարների ագրեսիվ գործողությունների պատճառով, որոնք ուզում են յուրացնել թաղամասի մի մասը: Վերջին միջադեպը Ավստրալիայի իսրայելցի գործարար Դենի Ռուբենշտեյնի հետ կապ ունեցող անձանց կողմից հայ համայնքի վրա իրականացված հարձակումն էր, որի հետեւանքով վիրավորվել և ձերբակալվել են հայ բնակիչներ: Չնայած բողոքներին և պաշտպանության կոչերին՝ Իսրայելի իշխանությունները վճռական քայլեր չեն ձեռնարկել հայկական թաղամասն այս ագրեսիվ ներխուժումներից պաշտպանելու համար:
Այս զարգացումների շրջանակներում ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակը կոչ է անում Իսրայելի իշխանություններին՝ պաշտպանել Երուսաղեմի ստատուս քվոն և ձեռնպահ մնալ Երուսաղեմի ժողովրդագրական կազմը, ինստիտուցիոնալ կառուցվածքը և ֆիզիկական, մշակութային և պատմական բնույթը փոխելուց: Զուգահեռներ անցկացնելով երկու ազգերի՝ հայերի ու հրեաների պատմության ընթացքում կրած տառապանքների միջև, ստիպված լինելով պայքարել ռասայական ատելության դեմ՝ ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակը ընդգծում է, որ Իսրայելի իշխանությունները պարտավոր են կանխել և հետագայում խուսափել նման դեպքերից Երուսաղեմում:

Text Link

Հայ դատի Կանադայի հանձնախումբ

Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Հայ Դատի աշխատանքներու ժողովրդային զեկուցահաւաք

Հինգշաբթի, 16 Մայիս 2024-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Ահարոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ Հայ Դատի աշխատանքներու ժողովրդային զեկուցահաւաք, կազմակերպութեամբ Հայ Դատի Քեպէգի յանձնախումբին:
Օրուան զրուցավարն էր Հայ Դատի Քեպէգի յանձնախումբի անդամ Թալին Ապրաքեան, որ նախ ողջունեց ներկաները, ապա ներկայացուց օրուան զեկուցաբերները՝ Հայ Դատի Օթթաուայի Գրասենեակի տնօրէն Սեւակ Պէլեանը, Հայ Դատի Քեպէգի յանձնախումբի համաատենապետ Վարանդ Եափուճեանը, Հայ Դատի Ուաշինկթընի Գրասենեակի աշխատակից եւ Հայ Դատի Արցախի գրասենեակի նախկին տնօրէն Կէւ Իսքաճեանն ու Հայ Դատի Ուաշինկթընի գրասենեակի աշխատակից Ալեքս Կալիցքին:

Զեկոյցի առաջին թեման էր Գանատայի եւ ԱՄՆ-ի քաղաքական դաշտերը. Հայ Դատի Ուաշինկթընի գրասենեակի աշխատակից Ալեքս Կալիցքի անդրադարձաւ Գանատայի եւ ԱՄՆ-ի քաղաքական ասպարէզի նմանութիւններուն եւ տարբերութիւններուն, յայտնելով թէ Գանատայի այլազան կուսակցութիւններու գոյութիւնը առաւել եւս կ'ընդարձակէ քաղաքական ասպարէզը, եւ թէ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը աւելի մեծ հասանելիութիւն ունի քաղաքական գործիչներու եւ պաշտօնատարներու: Հայ Դատի Օթթաուայի Գրասենեակի տնօրէն Սեւակ Պէլեան այս նիւթին շուրջ յայտնեց, թէ Գանատայի Ծերակուտականի եւ Խորհրդարանի հետ ուղղակի համագործակցութիւն ունի Հայ Դատի Օթթաուայի գրասենեակը, տրուած ըլլալով որ Գանատայի համակարգը այդ առիթը կ'ընծայէ, եւ այս գործակցութեան իրագործումներէն մէկը եղաւ Հայաստանի մէջ Գանատայի դեսպանատան հիմնումը: Իսկ Հայ Դատի Քեպէկի յանձնախումբի համաատենապետ Վարանդ Եափուճեան անդրադարձաւ Գանատայի տարածքին Հայ Դատի յանձնախումբերուն գործունէութեանց եւ յայտնեց, թէ տեղական յանձնախումբերը գործակցելով տեղական կառավարութեանց՝ դաշնակցային, նահանգային եւ քաղաքապետական մակարդակներու վրայ սերտ գործակցութիւն կը ցուցաբերեն պաշտօնատարներուն հետ, ի նպաստ Հայ Դատի գործունէութեան:

Text Link

Հայ դատի Հարավային Ամերիկայի հանձնախումբ

Ուրուգվայի Ներկայացուցիչների պալատը միաձայն կողմ է քվեարկել ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր հռչակող օրինագծին

Ուրուգվայի Ներկայացուցիչների պալատը մայիսի 14-ին միաձայն (74 կողմ ձայն՝ 74 ներկա պատգամավորներից) հավանություն է տվել յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը «Հայոց ցեղասպանության հիշատակի օր» հռչակող օրենքի նախագծին, որը պետական բոլոր հեռուստա և ռադիոալիքներին պարտավորեցնում է յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին միաժամանակ անդրադառնալ Հայոց ցեղասպանության թեմային: Այս մասին հայտնում է DiarioArmenia-ն:
Նշվում է, որ այս նախաձեռնությունը Սենատի կողմից հավանության էր արժանացել մայիսի 7-ին, ուստի, եթե Գործադիրի կողմից որևէ դիտարկում չլինի, այն որպես օրենք կհրապարակվի առաջիկա օրերին:
Հավանության արժանացած օրինագիծն իր միակ հոդվածով սահմանում է, որ յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ը հայտարարվում է «Հայոց ցեղասպանության հիշատակի օր»՝ ռադիոյի և բաց հեռուստատեսության տեսալսողական բովանդակության հեռարձակման, բաժանորդների համար՝ հեռուստատեսության սեփական ազդանշաններով և հեռուստատեսային ծառայություններով:
Նախագիծը ներկայացրել են խորհրդարանականներ Նազմի Կամարգոն, Մարիա Եվգենիա Ռոսելոն, Խուան Մարտին Ռոդրիգեսը և Միկաելա Մելգարը:
Պատգամավորներ Պեդրո Ջիսդոնյանը, Կառլոս Վարելան, Ռաֆայել

Մենենդեսը, Իվան Պոսադան, Մարիա Եվգենիա Ռոսելոն, Ֆելիպե Ալգորտան, Ուգո Կամարան, Ուբալդո Այտան և Խուան Մարտին Ռոդրիգեսը մասնակցել են խորհրդարանական բանավեճին՝ հօգուտ նախագծի:
Իրենց ելույթների ընթացքում նրանցից մի քանիսը դատապարտել են այն ձևը, որով Թուրքիայի ժխտողականությունը և նրա անպատժելիությունը խթանել են Ադրբեջանի հանցագործությունները Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակիչների նկատմամբ վերջին տարիներին, ներառյալ հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը:
Ըստ աղբյուրի՝ երկու պալատների կողմից հաստատված նախագիծը հիմնված է Ավետարանական եկեղեցու դոկտոր Գուստավո Վանեսկահյանի նախաձեռնության վրա, որը հրապարակային դառնալուց հետո ստացել է հայ համայնքի տարբեր հաստատությունների, այդ թվում՝ Ուրուգվայի Հայ դատի խորհրդի աջակցությունը:
Ուրուգվայի Սենատորների պալատը մայիսի 7-ին միաձայն կողմ էր քվեարկել յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը «Հայոց ցեղասպանության հիշատակի օր» հռչակող օրենքի նախագծին, որը պետական բոլոր հեռուստա և ռադիոալիքներին պարտավորեցնում է յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին միաժամանակ անդրադառնալ Հայոց ցեղասպանության թեմային:

Text Link

La Cámara de Representantes de Uruguay aprobó una ley que establece la obligatoriedad de transmitir una cadena nacional dedicada al Genocidio Armenio cada 24 de abril

La Cámara de Representantes de Uruguay aprobó el 14 de mayo por unanimidad (74 votos afirmativos en 74 diputados presentes) un proyecto de ley que declara el 24 de Abril de cada año como el “Día de recordación del Genocidio Armenio” y establece que los medios del país deberán “integrar la cadena oficial de trasmisión simultánea, que a dicho efecto determinará anualmente y en ese día el Poder Ejecutivo”.
La iniciativa había sido aprobada por el Senado el pasado 7 de mayo , por lo que de no interponerse observaciones por parte del Poder Ejecutivo, será promulgada como ley en los próximos días.
El proyecto fue presentado por los representantes nacionales Nazmi Camargo (Cabildo Abierto), María Eugenia Roselló (Partido Colorado), Juan Martín Rodríguez (Partido Nacional) y Micaela Melgar (Frente Amplio). Del debate parlamentario, argumentando a favor del proyecto participaron los diputados Pedro Jisdonian, Carlos Varela, Rafael Menéndez, Ivan Posada, María Eugenia Roselló, Felipe Algorta, Hugo Cámara, Ubaldo Aita y Juan Martín Rodríguez. Como parte de sus alocuciones, varios de ellos denunciaron la forma en que el negacionismo de Turquía y su impunidad han alimentado los crímenes de Azerbaiyán contra los habitantes de Armenia y Artsaj en los últimos años, incluyendo la destrucción del patrimonio cultural armenio.
El proyecto aprobado por ambas Cámaras está basado en una iniciativa del Dr. Gustavo Vaneskahian de la Iglesia Evangélica Armonía, que tras hacerse pública, recibió el respaldo de distintas instituciones de la colectividad armenia, entre ellas el Consejo Causa Armenia del Uruguay.

Text Link



Armenian Legal Center Files Seven Global Magnitsky Act Sanctions Cases Against Azerbaijani Officials

The Armenian Legal Center for Justice and Human Rights (ALC) filed seven Global Magnitsky Act sanctions cases with the United States Department of State and Treasury against more than 40 senior Azerbaijani officials. Filed jointly with the International and Comparative Law Center based in Yerevan, Armenia, with several co-submitted with the Lemkin Institute for Genocide Prevention, these Magnitsky Sanctions cases are in direct response to war crimes and human rights abuses committed during the recent Artsakh / Nagorno-Karabakh war, which culminated in the ethnic cleansing and forced deportation of indigenous Armenians.
“The Armenian Legal Center is committed to pursuing justice for the victims of war crimes and human rights violations,” said Ken Hachikian, Chairperson of the Armenian Legal Center. “By initiating Global Magnitsky Act sanctions cases against Azerbaijani officials, we aim to hold perpetrators accountable for their actions and ensure that justice is served.”
With these submissions, the ALC is calling on the U.S. government to take decisive action against those responsible for perpetrating serious human rights violations, including war crimes and crimes against humanity. The ALC stressed that atrocities committed against the people of Artsakh, Armenia, and the entire Armenian nation demand swift and firm response in the pursuit of justice and accountability for the victims and help prevent future atrocities.

Text Link

Հայկական իրավական կենտրոնն ադրբեջանցի ավելի քան 40 պաշտոնյաների նկատմամբ «Մագնիցկու գլոբալ պատժամիջոցների» կիրառման պաշտոնական դիմում է ներկայացրել

Հայ դատի համակարգում գործող «Արդարության և մարդու իրավունքների հայկական իրավական կենտրոնը (ALC) «Մագնիցկու գլոբալ պատժամիջոցների» կիրառման ապահովման դիմում է ներկայացրել ԱՄՆ պետքարտուղարություն և ֆինանսների նախարարություն՝ ընդդեմ ավելի քան 40 ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաների: Թվով 7 դիմումները ներկայացվել են Երևանում գործող «Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի» հետ համատեղ աշխատանքի արդյունքում, ինչպես նաև մի շարք միջազգային կազմապերպությունների, այդ թվում, Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտի ներգրավմամբ: Այս դիմումներն ուղղակի արձագանք են

արցախյան պատերազմի ժամանակ ռազմական հանցագործություններին և մարդու իրավունքների ոտնահարումներին, որոնց գագաթնակետն Արցախի էթնիկ զտումն էր և բնիկ ժողովրդի բռնի տեղահանումը:
Անդրադառնալով այս գործերի ներկայացմանը՝ Հայկական իրավական կենտրոնի նախագահ Քեն Խաչիկյանը նկատել է. «Հայկական իրավական կենտրոնը հանձնառու է պատերազմական հանցագործությունների և մարդու իրավունքների ոտնահարման համար արդարադատության իրականացմանը: «Մագնիցկու գլոբալ ակտի» շրջանակում Ադրբեջանի պաշտոնյաների դեմ պատժամիջոցների հարուցմամբ՝ մենք նպատակ ունենք մեղավորներին պատասխանատվության ենթարկել իրենց գործողությունների համար և ապահովել արդարադատության իրականացումը»:

Text Link

Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Լիբանանի Մէջ Հաւատարմագրուած Դեսպաններու Նամակներ Յղեց

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ, Ֆրանսայի, Եւրոպական Միութեան, Զուիցերիոյ, Սպանիոյ եւ Մալթայի դեսպաններուն յղեց նամակ մը՝ անդրադառնալով Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ ընթացող սահմանազատման ու սահմանազծման հոլովոյթին:
Յանձնախումբը դեսպաններուն ուշադրութեան յանձնեց, որ ներկայ հոլովոյթը կը հակասէ միջազգային արժէչափերուն եւ սկզբունքներուն, ներառեալ այն սկզբունքը, թէ ուժի կիրարկման սպառնալիքի կամ ուժի կիրարկման միջոցով գոյացած որեւէ միջազգային համաձայնագիր անվաւեր կը նկատուի: Հոլովոյթը մասնաւորաբար չի յարգեր ՄԱԿ-ի Միջազգային համաձայնագիրներու օրէնքի հռչակագիրը (1969) եւ Հելսինքեան վերջնական հռչակագիրը (1975):
«Խաղաղութեան համաձայնագիրի մը բացակայութեան, փորձ կը կատարուի սահմանային խնդիրը լուծելու մաս առ մաս, միակողմանի զիջումներու միջոցով եւ Ազրպէյճանի բռնադատման ճամբով, ինչ որ անխուսափելիօրէն պիտի յանգեցնէ Հայաստանի եւ անոր բնակչութեան համար անվտանգութեան լուրջ խնդիրներու, եւ լրջագոյն սպառնալիք պիտի ստեղծէ շրջանին մէջ գտնուող հայկական հնադարեան մշակութային ժառանգութեան: Բռնագրաւուած Արցախի Հանրապետութեան մէջ ներկայիս ընթացող մշակութային ցեղասպանութիւնը անոնց հետագայ ճակատագիրին վերաբերեալ որեւէ կասկած չի ձգեր:

Text Link

Հայ դատի Սիրիայի հանձնախումբ

Սուրիոյ Հայ դատի

կեդրոնական յանձնախումբին կազմակերպած խորհրդաժողովը նուիրուած՝ Արցախի եւ արցախահայութեան իրաւունքներուն

Ուրբաթ, 17 Մայիս 2024-ին, կազմակերպութեամբ Սուրիոյ Հայ Դատի Կեդրոնական Յանձնախումբին, տեղի ունեցաւ միջմիութենական խորհրդաժողով մը «Արցախն ու 21-րդ դարու Յեղասպանութիւնը» խորագրով։ ԱՄԺՏ «Լեւոն Շանթ» սրահէն ներս ի մի եկած էին՝ Սուրիոյ Երիտասարդական Միութեան(ՍԵՄ-ի), Ազգային Քարէն Եփիէ Ճեմարանի Շրջանաւարտից Միութեան, Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութեան, Հայ Կաթողիկէ Միութեան, Հայ Աւետարանական Քրիստոնեայ Ջանիցի, Սուրիահայ Օգնութեան Խաչի, Համազգայինի, Քրիստափոր Ուսանողական Միութեան, Սուրիոյ Պատանեկան Միութեան Ընդհ. Վարիչ Մարմինի, «Գանձասար» շաբաթաթերթի եւ Ռատիօ Երազի ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Հայ Երիտասարդաց Ընկերակցութենէն, ՍՕԽ-էն ու այլ միութիւններէ ունկնդիրներ։
Բեմավար Սարին Գրիգորեան ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգելու նահատակներու յիշատակը եւ Արցախի օրհներգով բանալու խորհրդաժողովը։
Կազմակերպիչ Մարմինին կողմէ Գէորգ Մանուկեան բացման խօսքով ըսաւ, թէ որքան ալ երկար տեւէ ազգի ու հայրենիքի փրկութեան երթը, որքան դժուար ըլլայ ու խոչընդոտներու բախի, պէտք է շարունակուի մինչեւ յաղթանակ։ Պայքարին մէջ կը յաղթանակէ ան, որ կը յարատեւէ մինչեւ վերջ։

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info

Armenian Cause Foundation | Mkher Mkrtchyan 12/1 | Yerevan, 0010 AM

Unsubscribe | Update Profile | Constant Contact Data Notice

Constant Contact

Try email marketing for free today!